«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Դալլաքյան Լ.Գ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Օրենսդրական տեխնիկա

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Դասընթացի անոտացիա

Օրենսդրության կատարելագործման հիմնական պայմաններից մեկը օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի տեքստի մշակման նկատմամբ առաջադրվող պահանջների և կանոնների համակարգն է: Այդպիսի պահանջները, որոնք դարեր շարունակ մշակվել են իրավաբանական գիտության և պրակտիկայի կողմից, ձևակերպվել են գիտության հատուկ ճյուղում, որը կրում է օրենսդրական տեխնիկա անվանումը:

«Օրենսդրական տեխնիկա» դասընթացը իրավաբանական գիտության համակարգում համարվում է կիրառական և մեթոդաբանական առարկա: Անցյալում հանդիսանալով պետության և իրավունքի տեսության մաս, ներկայումս օրենսդրական տեխնիկան հանդես է գալիս որպես գիտության անկախ ոլորտ՝ նպատակաուղղված ինքնուրույն խնդիրների լուծման վրա: Սույն առարկայում հստակ դրսևորվում է տեսության և պրակտիկայի փոխգործողությունը, հիմնարար և կիրառական գիտելիքների փոխազդեցությունը:

«Օրենսդրական տեխնիկա» առարկայի ուսումնասիրությունը ունի կարևոր նշանակություն որակավորված իրավաբանների պատրաստման համար, ովքեր իրենց մասնագիտացման համապատասխան ունակ կլինեն իրավական նորմերը վերլուծելու, մեկնաբանելու և ճիշտ կիրառելու, մասնակցելու նորմատիվ իրավական ակտերի մշակմանը և փորձաքննությանը, տրամադրել որակյալ իրավաբանական եզրակացություններ և խորհրդատվություն: Տվյալ առարկայի կողմից ուսումնասիրվող օրենսդրական տեխնիկայի կանոնները և պահանջները համընդհանուր կիրառվում են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման, այդ թվում նաև գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ներքին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի մշակման ժամանակ:

Տվյալ դասընթացի միջոցով ուսումնասիրվում է նորմատիվ նյութի ձևավորման մեթոդների, հնարքների միջոցների և կանոնների համակարգը: Դասընթացը շրջանակներում ուսումնասիրվում է նաև իրավաստեղծ գործունեության առանձին փուլերը, հատուկ ուշադրություն է ընձեռված օրենսդրական նախագծերի մշակման տեխնոլոգիային, ինչպես նաև տարբեր նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության իրականացման կանոններին և տեսակներին:

«Օրենսդրական տեխնիկա» դասընթացի ուսումնասիրությունը նպաստում է ուսանողների մոտ օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի նախագծերի մշակման և ձևակերպման հմտությունների և ստեղծարար ունակությունների ձևավորմանը, ինչպես նաև օրենսդրական նախագծերի իրավական փորձաքննության իրականացման և այլ տեսակի փորձագիտական խորհրդատվական գործունեության ունակությունների ձեռքբերմանը:

Դասընթացի կապն ուսումնական պլանի այլ առարկաների հետ: «Օրենսդրական տեխնիկա» դասընթացը գտնվում է տրամաբանական և բովանդակային կապի մեջ մասնագիտական ուղղության այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Պետության և իրավունքի տեսությունը», «Սահմանադրական իրավունքը» և «Իրավաբանական rիրը»:

2. Դասընթացի նպատակն ու խնդիրները

Սույն ուսումնական դասընթացի *նպատակն է* օրինաստեղծ գործունեության ոլորտում համակարգային տեսական գիտելիքների ձևավորումը ուսանողների մոտ, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի գործառնական հմտությունների և ունակությունների ձևավորումը։

Դասընթացի խնդիրները ներառում են՝

- օրենսդրական համակարգի և օրինաստեղծ տեխնոլոգիայի մասին գիտելիքների խորացումը;
- օրենսդրական տեխնիկայի հիմնական կանոնների, մեթոդների և միջոցների ուսումնասիրությունը և յուրացումը;
- օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի տեքստերի մշակման ունակությունների ձևավորումը;
- օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության հիմունքների հետ ծանոթացումը։

3. Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է հանդիսանում իրավաբանական գործունեության իրականացման առավել ընդհանուր իրավաչափությունները, որոնց հիման վրա մշակվում և ընդունվում են նորմատիվ բովանդակության իրավական ակտեր։

Տվյալ դասընթացի առարկան է հանդիսանում նորմատիվ նյութի ձևավորման մեթոդների, հնարքների, միջոցների և կանոնների համակարգը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության իրականացման կանոնները և սկզբունքները։

4. Դասընթացի մուտքային պահանջները

«Օրենսդրական տեխնիկա» դասընթացի պատշաճ յուրացման համար ուսանողը պետք է պատկերացում ունենա հիմնական իրավական հասկացությունների և կատեգորիաների մասին, որոնք ուսումնասիրվում են «Պետության և իրավունքի տեսություն» առարկայի շրջանակներում, ինչպես նաև «Իրավագիտություն» մասնագիտացման ընթացքում իրավաբանական առարկաների ամբողջ համալիրի ուսումնասիրության շրջանակներում ձեռք բերված գիտելիքները։

5. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Գիտելիքները՝

- **Գիտելիք և իմացություն .**

1. Իրավաբանական/օրենսդրական տեխնիկայի հիմնական կանոնների և պահանջների, նորմատիվ նյութի ձևավորման մեթոդների, միջոցների և հնարքների վերաբերյալ հիմնարար գիտելիք.

2. Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի պաշտոնական իրավական փորձաքննության կանոնների և ընթացակարգերի, իմչպես նաև փորձաքննության ընթացքում կիրառվող համապատասխան ստուգաթերթերի իմացություն.

Հմտությունները՝

- **Գիտելիքի և իմացության կիրառում.**

1. Կարող է ինքնուրույն մշակել և կազմել նորմատիվ իրավական և ներքին (լոկալ) իրավական ակտեր, իրականացնել նշված իրավական ակտերի և նախագծերի իրավական փորձաքննություն և ներկայացնել համախատասխան իրավաբանական եզրակացություններ.

2. Կարող է օրինական մեթոդներով՝ օգտվելով ՀՀ մասնագիտացված որոնողատեղեկատվական իրավական համակարգերի և էլեկտրոնային հարթակների ընձեռած հնարավորություններից որոնել և գտնել վերաբերելի նորմատիվ իրավական և լոկալ ակտեր, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև «ARLIS» և «IRTEC» և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ https://e-draft.am իրավական հարթակների միջոցով հետևել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընթացիք փոփոխություններին։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- **Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ**

1. Տիրապետելով տարբեր էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում անհրաժեշտ իրավական փաստաթղթեր և տեղեկատվություն որոնելու հմտություններով՝ կարող է հավաքել, մշակել, մեկնաբանել և վերլուծել որոշակի քանակական և որակական տվյալներ, որոնք անհրաժեշտ են իրավաստեղծ գործնթացի նախորդող և սկզբնական փուլերի աշխատանքները պատշաճ կատարելու համար

- **Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը).**

1. Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս՝ մասնավորապես իրավաստեղծ ոլորտում գործունեություն ծավալելիս և նորմատիվ ակտեր մշակելիս, ցուցաբերել վերլուծական դատողություններ անելու ունակություն, ստեղծագործական մոտեցում և նախաձեռնողականություն:

- **Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ներառյալ սովերելու կարողությունները).**

1.Ունակ է ինքնուրույն (կամ համապատասխան ղեկավարման ներքո) պատասխանատու կերպով աշխատելու տարբեր մասնագիտական թիմերում/խմբերում, որոնք մշակում և ներկայացնում են նորմատիվ իրավական և ներքին (լոկալ) իրավական ակտերի նախագծեր, կամ իրականացնում են նորմատիվ բնույթի ակտերի իրավական փորձաքննություն. Տիրապետում է տվյալ ոլորտում ինքնուրույն ուսումնառությունը շարունակելու բավարար կարողություններին և սովորելու հմտություններին

6. <u>Դասավանդման եղանակները և մեթոդները</u>

Դասընթացի շրջանակներում կիրառվում են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաների տարրեր (brainstorm, բանավեճ, դիսկուսսիաներ և այլ)։ Տվյալ դասընթացը պահանջում է համակարգային ուսումնասիրություն, որի հիմնական մասը անցկացվում է դասախոսությունների, և սեմինարների (գործնական դասերի) միջոցով։

Դասախոսության ընթացքում դասախոսի կողմից մատուցվում է հիմնական նյութը՝ որում համակարգված ձևով բացահայտվում է տարբեր գիտական աղբյուրներում և նորմատիվ իրավական ակտերում օրենսդրական տեխնիկայի սահմանված կանոնները։ Նյութը լավագույնս ըմբռնելու և հստակ ցուցադրման համար դասախոսությունն ուղեկցվում է PPT պրեզենտացիաներով, ինչպես նաև իրականացվում է պրակտիկ ցուցադրում օրենսդրական տվյալների բազայի և իրավաբանական որոնման համակարգերով, և այլ պաշտոնական իրավական տեղեկատվական հարթակներում Ինտերնետ ցանցի միջոցով։

Սեմինարական ժամերի ընթացքում դասախոսը վերահսկում է ուսանողների կողմից ուսումնական նյութի ընկալման և յուրացման աստիճանը և որակը։ Դասախոսի կողմից հաշվի են առնվում, թե որքանով է ուսանողը տիրապետում օրենսդրական տեխնիկայի խնդրահարույց ասպեկտներին, ինչից հետո կատարվում են համապատասխան շտկումներ հաջորդ դասախոսական ժամերի ընթացքում։ *Գործնական պարապմունքների*

ընթացքում ուսանողները, մշակելով տարբեր օրենսդրական նախագծեր, ինչպես նաև իրականացնելով նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, անմիջապես ձեռք են բերում համապատասխան հմտություններ։

Ուսանողի ինքնուրույն աշխատանքը իրականացվում է դասախոսի անմիջական վերահսկողությունից դուրս։ Ինքնուրույն աշխատանքի որակի բարելավման նպատակով դասախոսի կողմից կազմակերպվում են կոնսուլտացիաներ մի շարք հարցերով։ Ինքնուրույն աշխատանքի շրջանակներում ուսանողն առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնի ստացված գիտելիքների ամրապնդմանն ու համակարգմանը։ Հաջորդիվ, ուսանողը պետք է ընդլայնի և խորացնի իր տեսական գիտելիքները ուսումնասիրելով լրացուցիչ աղբյուրներ, ուսումնական և գիտական գրականություն, ծանոթանալով նորմատիվ ակտերի հետ։ Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և ինքնուրույն ուսումնասիրված նյութերը վերջնականորեն ամրապնդելու համար խորհուրդ է տրվում ամփոփել կուրսը դասախոսին զեկույց կամ ռեֆերատ ներկայացնելով։

7. Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ և 72 ակադեմիական ժամ աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է դասախոսությունների և 16 ակադեմիական ժամ գործնական պարապմունքների համար։ Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 3 -րդ ուսումնական տարվա 1 կիսամյակում։

8. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների							
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 կիս.	5 Կիս.	6 Կիս.	7 Կիս.	8 Կիս.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	72					72			
11.1. Լսարանային պարապմունքներ:	32					32			
11.1.1.Դասախոսություններ	16					16			
11.1.2.Սեմինարներ/գոր	16					16			
11.2. Ինքնուրույն աշխատանք	40					40			
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)									

9. Կշիռների բաշխումը ըստ մոդուլների և ստուգման ձևերի

Ստուգման ձևերը	Ընթացիկ ստուգումների ձևերի կշիռները ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականներում			Միջանկյալ ստուգումների ձևերի կշիռները միջանկյալ ստուգումների գնահատականներում			Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականների կշիռները միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականներում	Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականի և վերջնական ստուգման գնահատականի կշիռները վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում
Ուսումնական աշխատանքի/ստուգման տեսակը	M1	M2		M1	M2			
Ստուգողական աշխատանք				0,6				

Բանավոր ստուգում	1							
Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականների կշիռները				0,4				
Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 1-ին միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը								
Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 2-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը								
Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 3-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը								
Վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում միջանկյալ քննությունների արդյունքային գնահատականի կշիռը.								0,4
Քննություն/**ստուգարք** (Վերջնական ստուգման գնահատական)								0,6
	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1	Σ=1

10. Առարկայի բովանդակությունը

10.1 Թեմատիկ պլան (Առարկայի ծավալի բաշխում ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների)

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը (ակ. ժամեր)	Լեկցիաներ (ակ. ժամեր)	Պրակտիկ պարապմունքներ (ակ. ժամեր)	Ինքնուրույն աշխատանք
1	**2**	**3**	**5**	**6**
Թեմա 1. Օրենսդրական տեխնիկայի ներածություն: Օրենսդրական տեխնիկայի հասկացությունը և էությունը:	5	1	1	3
Թեմա 2. Օրինագծերի և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման փուլերը և տեխնոլոգիան:	6	1	1	4
Թեմա 3. Նորմատիվ իրավական ակտերի իրավական փորձաքննությունը (և փորձաքննության այլ տեսակները):	9	2	3	4
Թեմա 4. Նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին ներկայացվող պահանջները:	7	2	1	4
Թեմա 5. Օրենսդրական տեխնիկայի ձևական (վավերապայմանների) պահանջները :	6	2	1	3
Թեմա 6. Ընդհանուր լեզվառճային պահանջներ: Օրենքի լեզուն և ոճը:	7	1	1	5
Թեմա 7. Օրենսդրական տեխնիկայի ուղղագրության և շարահյուսության պահանջները: Տեքստի ձևավորման տառագրական կանոններ:	8	2	2	4
Թեմա 8. Հղումների կիրառման տեխնիկան	5	1	1	3

Թեմա 9. Նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման տեխնիկան:	11	2	5	4
Թեմա 9. Թեմա 10. Իրավաբանական տերմինաբանություն և սահմանումներ (դեֆենիցիաներ):	10	2	2	6
Ընդհանուր	**72**	**16**	**16**	**40**

10.2 Առարկայի բաժինների և թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Օրենսդրական տեխնիկայի ներածություն:

Օրենսդրական տեխնիկայի հասկացությունը և էությունը: Օրենսդրական տեխնիկայի սահմանումը՝ տարբեր գիտական մոտեցումների առանձնահատկությունները: Օրենսդրական տեխնիկան իրավաբանական գիտությունների համակարգում: Իրավաբանական տեխնիկայի և օրենսդրական տեխնիկայի հարաբերակցությունը: Օրենսդրություն. հասկացությունը, նշանակությունը և տարրերը: ՀՀ իրավաբանական դոկտրինում և օրենսդրության մեջ «օրենսդրություն» հասկացության սահմանման նեղ և լայն մոտեցումները:

Գրականություն

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դադունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024
2. Законодательная техника: учеб. пособие / Н. Т. Леоненко. Новосибирск: Изд-во СибАГС, 2015
3. Законодательная техника: учеб. пособие/ Чухвичев Д.В.; Центр ОБСЕ в Ашхабаде, 2011
4. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html
5. Горохова, С. С. Юридическая техника: учебник для академического бакалавриата /С.С. Горохова. М.: Издательство Юрайт, 2017

6. Кашанина, Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015

գ) Լրացուցիչ գրականություն

1. Болдырев С.Н. Юридическая техника и законодательная техника: проблема соотношения, Философия права. 2015. № 1 (68), с. 51-53
2. Чуева А.В. Понятие законодательной техники и круг компонентов законодательной техники. Современное общество и право. 2014. № 1 (14), с. 109-112
3. Кибак И.А.Законодательная техника в законотворческой деятельности. Вестник Московского университета МВД России. 2013. № 1, с. 214-222

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Իրավական ակտերի մասին» (ընդունվել է 2002 թ. ապրիլի 3-ին, ուժը կորցրել է)

2. Հայաստանի Հանրապետության օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունվել է 2018 թ. մարտի 21-ին)

Թեմա 2. Օրինագծերի և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման փուլերը և տեխնոլոգիան:

Օրենսդրական նախագծերի մշակման աշխատանքների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումը: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերը մշակող սուբյեկտները և նրանց լիազորությունները: Օրինագծերի համաձայնեցման ընթացակարգերը: Օրինագծերի կարգավորման ազդեցության գնահատումը: Օրինագծերին ուղեկցող փաստաթղթերի ցանկը և դրանց մշակումը: Հայեցակարգերի կազմման մեթոդական ցուցումներ: Նախագիծը շրջանառության մեջ դնելը: Նախագծի հանրային քննարկումը: Նախագծի փորձաքննությունը: Նախագծի ներկայացումը համապատասխան իրավաստեղծ մարմին պաշտոնական քննարկմանը: Նորմատիվ իրավական ակտերի գրանցումը և հրապարակումը: Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ https://e-draft.am: ՀՀ օրենսդրության «ARLIS» տեղեկատվական-որոնողական համակարգ: ՀՀ իրավական տեղեկատվության «IRTEC» համակարգ:

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դաղունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.
3. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.
4. Законодательная техника: учеб. пособие / Н. Т. Леоненко. Новосибирск: Изд-во СибАГС, 2015
5. Законодательная техника: учеб. пособие/ Чухвичев Д.В.; Центр ОБСЕ в Ашхабаде, 2011
6. Кашанина, Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015

գ) Լրացուցիչ գրականություն

1. Кибак И.А. Законодательная техника в законотворческой деятельности. Вестник Московского университета МВД России. 2013. № 1, с. 214-222
2. Законодательная техника: науч.-практ. пособие / Под ред. Ю.А. Тихомирова; Ин-т законодательства и сравнит. правоведения при Правительстве РФ. – М.: Городец, 2000
3. Ведомственное нормотворчество: теория и практика применения: монография / В. А. Баранов, В. В. Гущин, И. С. Долгих и др.; отв. ред. М. А. Лапина, В. А. Баранов. - Москва: Проспект, 2014

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով)
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» (ընդունված 16.12.2016)
3. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
4. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»

ե) Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք https://e-draft.am
2. ՀՀ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://arlis.am
3. ՌԴ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://garant.ru
4. ՌԴ տեղեկատվական իրավաբանական համակարգ https:// www.consultant.ru

Թեմա 3. Նորմատիվ իրավական ակտերի իրավական փորձաքննությունը (և փորձաքննության այլ տեսակները):

Իրավական փորձաքննության տեխնոլոգիան: Պարտադիր պետական-իրավական փորձաքննությունը: Փորձաքննության այլ տեսակները (իրավական, ֆինանսական, գիտատեխնիկական, էկոլոգիական, լեզվաբանական և այլն): Օրենքների և օրենսդրական ակտերի նախագծերի պարտադիր պետական-իրավական փորձաքննության առանձնահատկությունները: Կառավարության, պետական կառավարման համակարգի մարմինների նորմատիվ իրավական ակտերի և տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ ակտերի նախագծերի պարտադիր պետական փորձաքննություն: Պարտադիր պետական-իրավական փորձաքննության ոչ ենթակա նորմատիվ իրավական ակտեր: Ստուգման հիմնական չափանիշները: «Անհամաձայնության» ընթացակարգ: Պարտադիր հակակոռուպցիոն փորձաքննություն:

<u>ա) Բազային գրականություն</u>

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դադունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

<u>բ) Հիմնական գրականություն</u>

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Раздъяконова Е.В. Правовая экспертиза нормативных правовых актов: учебное пособие/ Е.В. Раздъяконова, Е.-Д.С. Третьякова; РАНХкГС, Сиб. Ин-т упр. – Новосибирск:Изд-во СибАГС, 2016
3. Миронов А. Н. Некоторые проблемы экспертизы нормативных правовых актов и пути их решения//Российская юстиция. 2009 N 12, с. 9-11

<u>գ) Լրացուցիչ գրականություն</u>

1. Костенко М. А. Логико-лингвистический анализ корректности текстов нормативно-правовых актов./ Таганрог: Изд-во ТРТУ. 2003, № 5 (34), с. 263-268
2. Кашанина Т.В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015

դ) Նորմատիվ հիմք

1. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»
2. ՀՀ Կառավարության որոշում «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման կարգը» (ընդունված 22.11.2009թ.)

ե) Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ Արդարադատության նախապապության իրավական ակտերի փորձաքննության գործակալություն պաշտոնական կայք http://www.moj.am/structures/view/structure/14

Թեմա 4. Նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին ներկայացվող պահանջները:

Նորմատիվ իրավական ակտի տեքստի կառուցվածքային կազմցածքը: Նորմատիվ իրավական ակտերի հատվածավորմանը ներկայացվող պահանջները: Օրենսգրքերի, օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի կառուցվածքի միջև հիմնական տարբերությունները: Օրենսգրքերի կառուցվածքային գործառնական և առարկայական չափանիշները: Նախաբան: Վերնագիր: Մաս: Բաժին: Գլուխ: Պարագրաֆ: Հոդվածի կառուցվածքը (մասեր, կետեր, ենթակետեր): Եզրափակիչ և անցումային դրույթներ: Հավելվածը որպես ֆակուլտատիվ մաս:

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դաղունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.
3. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024
4. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html
5. Кашанина Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015
6. Горохова, С. С. Юридическая техника: учебник для академического бакалавриата / С. С. Горохова. М.: Издательство Юрайт, 2017

գ) Լրացուցիչ գրականություն

1. Законодательная техника: науч.-практ. пособие / Под ред. Ю.А. Тихомирова; Ин-т законодательства и сравнит. правоведения при Правительстве РФ. – М.: Городец, 2000
2. Справочник по нормотворческой технике. Пер. с нем. 2-е изд., перераб. М. БЕК, 2002. Пер.: Елисеев Н.Г., Общ. ред.: Яковлева Т.Ф.

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»
3. «Методические рекомендации по юридико-техническому оформлению законопроектов» (направлены письмом Аппарата ГД ФС РФ от 18.11.2003 N вн2-18/490)

ե) Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://arlis.am
2. ՌԴ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://garant.ru

Թեմա 5. Օրենսդրական ակտերի վավերապայմանների (ռեկվիզիտների) ձևակերպման տեխնիկա

Տիտղոսային և այլ վավերապայմաններ (ռեկվիզիտներ)։ Նորմատիվ իրավական ակտի տեսակներին ներկայացվող ընդհանուր պահանջները: Նորմատիվ իրավական ակտը ընդունող մարմնի անվանումը։ Նորմատիվ իրավական ակտի վերնագրին ներկայացվող պահանջները։ Նորմատիվ իրավական ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը։ Նորմատիվ իրավական ակտը ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը և անվան սկզբնատառերը։ Նորմատիվ իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը։ Նորմատիվ իրավական ակտի ստորագրման վայրը։ Նորմատիվ իրավական ակտի հերթական (գրանցման) համարը։

.

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դադունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ
3. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024

4. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html
5. Кашанина, Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015
6. Законодательная техника: науч.-практ. пособие / Под ред. Ю.А. Тихомирова; Ин-т законодательства и сравнит. правоведения при Правительстве РФ. – М.: Городец, 2000

գ) Լրացուցիչ գրականություն

1. Горохова С. С. Юридическая техника: учебник и практикум для академического бакалавриата / С. С. Горохова. М., Издательство Юрайт, 2017

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»

ե) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով https://moodle.rau.am

Թեմա 6. Ընդհանուր լեզվառճային պահանջներ: Օրենքի լեզուն և ոճը:

Օրենքի լեզուն և ոճը որպես լեզվի ինքնուրույն ոճ: Պաշտոնական և իշխանական պարտադիր բնույթ ունենալը: Անաչառություն և հուզական չեզոքություն: Շարադրման տրամաբանական միասնականությունը և հաջորդականությունը: Կարգավորման ամբողջականությունը: Տեքստի համապարփակությունը և օրենսդրական դրույթների կոմպակտությունը: Լեզվի պարզությունը և մատչելիությունը: Իրավաբանական ձևի որոշակիությունը և ճշգրտությունը: Տերմինաբանության միատեսակությունը:

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. **Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դադունց և ուրիշ.-Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025**

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024
3. Хабибулина Н.И. Юридическая техника и язык закона: Монография. – СПб.: С.-Петерб. ун-т МВД России, 2000
4. Язык закона /Под. ред. А.С. Пиголкина. – М:, 1990
5. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html

գ) Լրացուցիչ գրականություն

1. Кашанина, Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015
2. Законодательная техника: учеб. пособие / Н. Т. Леоненко. Новосибирск: Изд-во СибАГС, 2015
3. Законодательная техника: учеб. пособие/ Чухвичев Д.В.; Центр ОБСЕ в Ашхабаде, 2011

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»

Թեմա 7. Օրենսդրական տեխնիկայի ուղղագրության և շարահյուսության պահանջները: Տեքստի ձևավորման տառագրական կանոնները:

Իրավական ակտերի պաշտոնական պետական լեզուն: Հապավումների, կրճատումների և օտարալեզու տերմինների օգտագործման կանոնները: Օտարերկրյա կազմակերպությունների անվանումները, ֆիզիկական անձանց անունները, աշխարհագրական օբյեկտների անվանումները, տեղանունների օգտագործումը: Տերմինաբանության կիրառման ընդհանուր կանոնները: Տարեթվի և թվերի (թվականների) ձևակերպման կանոնները: Շարահյուսական կառուցվածքը (բառակապակցություններ և նախադասություններ):

Օրինաստեղծ տառագրությունը որպես օրենսդրական տեխնիկայի մաս: Տառատեսակ, տառաչափ և տողերի միջև հեռավորություն: Վերնագրի գրաֆիկան: Հոդվածների գրաֆիկա: Մասերի, կետերի և ենթակետերի գրաֆիկական ձևավորումը:

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դադունց և ուրիշ.-Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Тарасов Н.Н. Юридические конструкции в праве и научном исследовании (методологические проблемы) \\ Российский юридический журнал, 2000, № 3, с. 25-36.
3. Ивакина Н.Н. Юристу о нормах правописания. Практ. пособие. – М., Норма: ИНФРА-М, 2013
4. Кашанина, Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015

գ) Լրացուցիչ գրականություն

1. Законодательная техника: науч.-практ. пособие / Под ред. Ю.А. Тихомирова; Ин-т законодательства и сравнит. правоведения при Правительстве РФ. – М.: Городец, 2000
2. Хижняк С.П. Юридическая терминология: формирование и состав. Монография. Изд-во Сарат. гос. ун-та, 1997

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»

ե) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով https://moodle.rau.am

Թեմա 8. Հղումների կիրառման տեխնիկան:

Նորմատիվ իրավական ակտերում հղումների կիրառման կանոնները ըստ օրենսդրական տեխնիկայի ընդհանուր տեսության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Ներքին հղումները: Արտաքին հղումները: Անորոշ հղումներ, շրջանաձև հղումներ. շարունակական հղումներ: Հղումներում նորմատիվ իրավական ակտերի լրիվ և կարճ անվանումների հիշատակելու կանոնները: Հոդվածների մասերում չհամարակալված պարբերությունների հիշատակումը՝ դրանց հղման դեպքում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հղումների կիրառման սահմանափակման և արգելման դեպքերը:

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դաղունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.
3. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html
4. Леоненко Н. Т. Законодательная техника: учеб. пособие/ Н. Т. Леоненко; РАНХиГС, Сиб. ин-т упр. - Новосибирск: Изд-во СибАГС, 2015

գ) Լրացուցիչ գրականություն

1. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024
2. Власенко Н. А. Основы законодательной техники: Практическое руководство. — Иркутск: Восточно-Сибирское книжное издательство, АО «Норма плюс», 2015

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»

Թեմա 9. Նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման տեխնիկան:

Գործող օրենսդրության մեջ փոփոխությունները՝ առանձին բառերի կամ թվերի փոխարինմամբ այլ բառերով կամ թվերով; առանձին բառերը, թվերը և նախադասությունները բացառելու միջոցով; դրա առանձին բաժինների, գլուխների, մասերի, կետերի, պարբերությունների և նախադասությունների նոր խմբագրությամբ շարադրմամբ; դրա առանձին բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, պարբերությունների գործողության դադարեցմամբ:

Նշված ակտերի ձևի և ընդունող սուբյեկտների նկատմամբ ներկայացվող պահանջները: Նորմատիվ իրավական ակտերի կառուցվածքային տարրերի համարակալման կանոնները դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում:

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դադունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.
2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
3. Горохова С. С. Юридическая техника: учебник и практикум для академического бакалавриата/ С.С. Горохова. М., Издательство Юрайт, 2017
4. Законодательная техника: учеб. пособие/ Чухвичев Д.В.; Центр ОБСЕ в Ашхабаде, 2011
5. Керимов Д.А. Законодательная техника: науч.-метод. и учеб. пособие. – М., 1997

գ) Լրացուցիչ գրականություն

1. Справочник по нормотворческой технике. Пер. с нем. 2-е изд., перераб. М. БЕК, 2002. Пер.: Елисеев Н.Г., Общ. ред.: Яковлева Т.Ф.
2. Парамонов А.Р. Законодательная техника: учеб. пособие. Под ред. Ф.Л.Шарова.- М: МИЭП, 2005
3. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.

դ) Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»
3. «Методические рекомендации по юридико-техническому оформлению законопроектов» (направлены письмом Аппарата ГД ФС РФ от 18.11.2003 N вн 2-18/490)

ե) Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք https://e-draft.am
2. ՀՀ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://arlis.am
3. Տեղեկատվական իրավաբանական համակարգ https:// www.consultant.ru
4. ՌԴ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://garant.ru

ժ) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով https://moodle.rau.am

Թեմա 10. Իրավաբանական տերմինաբանություն և սահմանումներ (դեֆենիցիաներ)։

Իրավաբանական տերմին. հասկացությունը և դասակարգումը։ Հանրահայտ, հատուկ իրավաբանական և հատուկ տեխնիկական տերմիններ։ Միանշանակ և երկիմաստ տերմիններ։ Սահմանումներ (դեֆենիցիաներ). հասկացությունը և դասակարգումը։ Ակնհայտ (էկսպլիցիտ) և ոչ ակնհայտ (իմպլիցիտ սահմանումներ։ Նոմինալ և իրական սահմանումներ։ Սահմանումների ձևակերպման կանոններ և եղանակներ։ Սահմանումներին ներկայացվող պահանջները։ Միջճյուղային տերմինների սահմանումների ձևակերպումը ճյուղի ինքնավարության լույսի ներքո։

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դաղունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
2. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024
3. Толстик В.А. Проблемы юридической терминологии// Актуальные проблемы экономики и права. 2013, N2, с. 176-180

4. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html
5. Леоненко Н. Т. Законодательная техника: учеб. пособие/ Н. Т. Леоненко; РАНХиГС, Сиб. ин-т упр. - Новосибирск: Изд-во СибАГС, 2015

գ) Լրացուցիչ գրականություն

1. Хижняк С.П. Юридическая терминология: формирование и состав. Монография. Изд-во Сарат. гос. ун-та, 1997

դ)Նորմատիվ հիմք

1. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
2. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»

ե) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով https://moodle.rau.am

11. Գիտելիքների գնահատման և ստուգման նյութերի ՖՈՆԴ

11.1 Սեմինարական /գործնական պարապմունքների պլաններ

Ուշադրություն՝ սեմինարների/ընթացիկ ստուգման շրջանակներում ուսանողների գիտելիքների գնահատման համար նախատեսված հարցերի ցանկը, ինչպես նաև սեմինարների ժամանակ քննարկման ներկայացվող բոլոր գործնական առաջադրանքները ձևավորվում են դասախոսի կողմից՝ սույն բաժնում շարադրված սեմինարական պարապմունքների **թեմատիկ պլանների** հիման վրա: Սեմինարական պարապմունքների ներկայացված պլանները (թեմաներ 1–9) սահմանում են ստուգողական հարցերի բովանդակային սահմանները ընթացիկ ստուգման բոլոր ձևերի համար

Թեմա 1. Օրենսդրական տեխնիկայի էության և հասկացության բացահայտումը: Օրենսդրական տեխնիկայի սահմանման վերաբերյալ տարբեր գիտական մոտեցումների շարադրումը և դրանց համեմատական վերլուծությունը: Օրենսդրական տեխնիկայի տեղի որոշումը իրավաբանական գիտելիքների համակարգում: Օրենսդրական և իրավաբանական տեխնիկայի փոխհարաբերակցության վերլուծությունը: Օրենսդրություն. հասկացությունը, նշանակությունը և տարրերը: Իրավական դոկտրինում և ՀՀ օրենսդրության մեջ «օրենսդրություն» կատեգորիայի սահմանման լայն և նեղ մոտեցումների շարադրումը:

Թեմա 2. Օրինագծերի և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման օրենսդրաստեղծ գործունեության փուլերը: Օրինագծերի մշակման աշխատանքների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման տարանջատումը՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Նորմատիվ իրավական ակտերի նախագծեր մշակող տարբեր սուբյեկտների լիազորությունների բացահայտումը: Օրինագծերի պատրաստման և համաձայնեցման բոլոր հիմնական փուլերի նկարագրությունը: Օրինագծին կից անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերի ցանկի շարադրումը և նկարագրությունը: Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական https://www.e-draft.am/ հարթակ: ՀՀ օրենսդրության «ARLIS» տեղեկատվական-որոնողական համակարգը, ՀՀ իրավական տեղեկատվության «IRTEC» համակարգ:

Թեմա 3. Իրավական փորձաքննության հիմունքները և ստուգման չափանիշների դիտարկումը: Պարտադիր պետական իրավական փորձաքննության և փորձաքննության այլ տեսակների (իրավական, ֆինանսական, գիտատեխնիկական, էկոլոգիական, լեզվաոճական, հակակորուպցիոն և այլն) նկարագրությունը: Օրենսդրական ակտերի նախագծերի պարտադիր պետական իրավական փորձաքննության առանձնահատկությունները: Կառավարության և պետական կառավարման համակարգի մարմինների ակտերի (գերատեսչական նորմատիվ ակտերի) պարտադիր պետական փորձաքննության առանձնահատկությունները: Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ ակտերի փորձաքննությունը: Ստուգման հիմնական չափանիշները: «Անհամաձայնության» ընթացակարգը: Ուսանողի կողմից սահմանված չափանիշներով փորձաքննության ինքնուրույն իրականացումը:

Թեմա 4. Նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին ներկայացվող պահանջները: Տեքստի տրոհման անհրաժեշտությունը, դրան ներկայացվող հիմնական պահանջներն ու օրինաչափությունները: Օրենսգրքերի, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի կառուցվածքային տարբերությունները. Ընդհանուր և հատուկ մասեր. գործառնական և առարկայական չափանիշները: Նորմատիվ իրավական ակտերի կառուցվածքային տարրերի համակարգը. նախաբան (պրեամբուլա) և վերնագիր. իրավական նշանակությունը և ձևակերպման կանոնները: Մաս, Բաժին, Գլուխ, Պարագրաֆ. խոշոր կառուցվածքային միավորների կիրառման պայմանները: Հոդվածի կառուցվածքը (մասեր, կետեր, ենթակետեր) և դրանց համարակալման տեխնիկան: Եզրափակիչ և անցումային դրույթներ. գործառնական նշանակությունը և ձևակերպումը: Հավելվածը որպես ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) մաս. կիրառման դեպքերը և իրավական ուժը:

Թեմա 5. Տիտղոսային և այլ վավերապայմանների ներկայացումը, դրանց ճիշտ հերթականությամբ:
Նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմնի անվանման, տարբեր նորմատիվ իրավական ակտերի անվանումների (վերնագրերի), դրանց ընդունման պայմանական ամսաթվի, նորմատիվ իրավական ակտն ստորագրած անձի պայմանական պաշտոնի անվանման և անվանատառերի, նորմատիվ իրավական ակտի ստորագրման ամսաթվի և վայրի ինքնուրույն ձևակերպումը, տարբեր տեսակի նորմատիվ իրավական ակտերի պայմանական հերթական համարի և հապավումների նշումը:

Թեմա 6. Օրենքի ոճն ու լեզուն՝ որպես օրենսդրական մշակույթի տարր: Օրենքի տրամաբանությունը՝ որպես օրենսդրական տեխնիկայի պահանջ: Ձևակերպումների և օրենսդրական դրույթների հակիրճության ես տեղեկատվական հագեցվածության օպտիմալ հարաբերակցությունը: Օրենսդրական լեզվի հրամայական, կամարտահայտչական և պաշտոնական ոճը: Էմոցիոնալ-պատկերավոր չեզոքությունը (մետաֆորների, էպիտետների, դատողական բնույթի գնահատականների և հրապարակախոսական տարրերի բացառումը: Նորմատիվ իրավական ակտի տերմինաբանության ընտրությունը, դրա միասնականությունը (ունիֆիկացումը): Իրավական որոշակիությունը պահանջը:

Թեմա 7. Նորմատիվ իրավական ակտերի տեքստերում հապավումների, կրճատումների և օտարերկրյա տերմինների կիրառման կանոնների դիտարկումը: Թարգմանության չենթարկվող ու օտարերկրյա կազմակերպությունների անվանումների, ֆիզիկական անձանց անունների, աշխարհագրական օբյեկտների անվանումների ձևակերպման կանոնների դիտարկումը: Ամսաթվերի և թվերի (թվականների) ձևակերպումը: Օրենսդրական տեխնիկայի ուղղագրության և շարահյուսության պահանջները: Տարբեր շարահյուսական կառուցվածքների ինքնուրույն ձևակերպումը: Տեքստի ձևավորման տառագրական կանոնները:

Թեմա 8. Նորմատիվ իրավական ակտերում հղումների կիրառման կանոնների տեսությունը և օրենսդրական պրակտիկան: Նորմատիվ իրավական ակտերում հղումների կիրառման կանոնների համառոտագիրը (ակնարկը)՝ համաձայն օրենսդրական տեխնիկայի ընդհանուր տեսության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի: Հղումների կիրառման սահմանափակումների և արգելքների թվարկումը: Տարբեր տեսակի հղումների (արտաքին և ներքին) ինքնուրույն ձևակերպումը: Հղումներում հիշատակվող նորմատիվ իրավական ակտերի կրճատ և լրիվ անվանումների նշման կանոնների շարադրումը:

Թեմա 9. Գործող օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոնները: Գործող օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոնների շարադրումը հետևյալ եղանակներով՝ դրա առանձին բառերի, թվերի կամ նախադասությունների լրացում, փոխարինում, հանում (բացառում). Նոր խմբագրությամբ շարադրում. Դրա առանձին բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի,

պարբերությունների գործողության դադարեցում: Այդ ակտերի տեսակին (ձևին) և դրանք ընդունող սուբյեկտներին ներկայացվող պահանջների, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կառուցվածքային միավորների համարակալման կարգի դիտարկումը՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու ժամանակ:

Թեմա 10. Իրավաբանական տերմինների և սահմանումների (դեֆինիցիաների) դասակարգումը: Իրավաբանական տերմինների և սահմանումների (դեֆինիցիաների) դասակարգումը: Տարբեր օրենսդրական տերմինների նսահմանումների օրինակների ներկայացումը, դրանց համեմատական-իրավական վերլուծությունը: Սահմանումներին ներկայացվող հիմնական պահանջների թվարկումն ու բացահայտումը: Տրված տերմինների սահմանումների ինքնուրույն ձևակերպումը: Բազմիմաստ միջճյուղային տերմինների և դրանց սահմանումների համեմատական վերլուծությունը՝ հաշվի առնելով ճյուղային ինքնավարությունը (ավտոնոմիան):

11.2 Ստուգարքի հարցաշար/ թեստերի և գործնական առաջադրանքների թեմաների ցանկ (գիտելիքների, իմացության և կարողությունների գնահատման համար)

1. «Օրենսդրական տեխնիկա» դասընթացի առարկան
2. Օրենսդրական տեխնիկայի տեղը իրավաբանական գիտությունների համակարգում
3. Օրենսդրական տեխնիկայի հասկացությունը և կառուցվածքը
4. ՀՀ օրենսդրության համակարգը: Օրենսդրություն հասկացության սահմանումը՝ նեղ և լայն մոտեցումներ
5. Օրինաստեղծման հիմնական սկզբունքները
6. Օրինագծերի նախապատրաստման հիմնական փուլերը
7. Նորմատիվ ակտի նախագծին կցվող անհրաժեշտ փաստաթղթերի կազմումը
8. Օրինագծերի փորձաքննության տեսակները (իրավաբանական, ֆինանսական, գիտա տեխնիկական, բնապահպանական, լեզվաբանական, հակակոռուպցիոն)
9. Պարտադիր պետական իրավական փորձաքննության չափանիշները
10. Օրենսդրական ակտի կառուցվածքը: Ռուբրիկացիայի կանոնները
11. Նորմատիվ իրավական ակտի ռեկվիզիտները (վավերապայմանները)
12. Հղումների տեխնիկա. հիմնական պահանջները և սահմանափակումները
13. Օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոնները
14. Օրենքի լեզուն և ոճը: Ընդհանուր լեզվաոճական պահանջները
15. Օրենսդրական տեխնիկայի ուղղագրության պահանջները
16. Օրենսդրական տեխնիկայի շարահյուսության պահանջները
17. Տեքստի ձևավորման տառագրական կանոնները
18. Իրավաբանական տերմինաբանություն. ընդհանուր պահանջներ

19. Իրավաբանական տերմինների դասակարգումը
20. Իրավաբանական դեֆինիցիա. սահմանում և դասակարգում
21. Իրավաբանական դեֆինիցիաների ձևավորման հիմնական կանոնները

11.3 Հարցեր և առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

1. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրում (ընդունվել է 03.04.2002թ., ուժը կորցրել է)՝ օրենսդրական տեխնիկայի պահանջների մասով:
2. ՀՀ Կառավարության N13 արձանագրային որոշմամբ (ընդունվել է 20.05.2004թ.) հաստատված՝ իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական հրահանգների ուսումնասիրում:
3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրում (ընդունվել է 21.03.2018թ.)՝ օրենսդրական տեխնիկայի պահանջների մասով:
4. ՀՀ օրենսդրության «ARLIS» տեղեկատվական-որոնողական համակարգի հետ աշխատանքի սկզբունքների ուսումնասիրում. աշխատանք ՀՀ իրավական տեղեկատվության «IRTEC» բազայի (համակարգի) հետ:
5. «Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական պորտալի»՝ e-draft.am-ի հետ աշխատանքի սկզբունքների ուսումնասիրում:

11.4 Կուրսային աշխատանքների, ռեֆերատների և զեկույցների թեմաներ

1. Օրենսդրական տեխնիկայի էությունը և հասկացությունը. տարբեր մոտեցումներ
2. Օրենսդրական տեխնիկայի զարգացման պատմությունը
3. Օրենսդրական տեխնիկայի առանձնահատկությունները տարբեր իրավական ընտանիքներում
4. Օրենքի մշակման տեխնոլոգիա
5. Օրենքի տրամաբանությունը, ոճը և լեզուն
6. Իրավաբանական կոնստրուկցիան որպես օրենսդրական տեխնոլոգիայի հիմնական միջոց
7. Իրավաբանական ֆիկցիան որպես օրենսդրական տեխնիկայի հնարք
8. Իրավաբանական կանխավարկածը որպես օրենսդրական տեխնիկայի հնարք և իրավաբանական կոնստրուկցիայի տեսակ
9. Իրավական աքսիոմներ. հասկացությունը, գործառույթները և դասակարգումը
10. Իրավաբանական դեֆինիցիայի և տերմինի հարաբերակցությունը
11. Իրավական փորձաքննություն. հասկացություն, տեսակներ, գործառույթներ

11.5 Գործնական բլոկ (գործնական առաջադրանքների օրինակներ)

ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու օրինագծի մշակում:

Առաջադրանք 1. Լրացման միջոցով օրենքում փոփոխությունների կատարում:

Օրենսդրական ակտի հոդվածի (մասի կամ կետի) տեքստում նոր կառուցվածքային մասերի լրացումները շրջանառության մեջ է դրվում հետևյալ կերպ. «Հոդվածը (մասը, կետը) .... լրացնել կետով (ենթակետով) ... հետևյալ բովանդակությամբ.....»: Հոդվածի տեքստում (մասում, կետում, ենթակետում) առանձին բառերի և նախադասությունների լրացումը կատարելու դեպքում այն շրջանառության մեջ է դրվում հետևյալ կերպ. «լրացնել բառով (բառերով)»:

Օրինակ՝

1. 2-րդ հոդվածի 1-ին կետում «պետական մարմիններ» բառից հետո լրացնել «և տեղական ինքնակառավարման մարմիններ» բառերով:
2. 22-րդ հոդվածը լրացնել 6-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «6. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ապրող վերջինիս քաղաքացիները»:

Առաջադրանք 2. Օրենքում փոփոխությունների կատարումը բառերի (նախադասությունների) հանելու միջոցով:

Հոդվածից (մասից, կետից, ենթակետից) բառերի հանելու միջոցով փոփոխությունը շրջանառության մեջ է դրվում հետևյալ կերպ. «ենթակետից...կետից....մասից....հոդվածից հանել»: Հոդվածի տեքստից կամ դրա կառուցվածքային տարրի՝ բառի կամ բառերի (նախադասությունների) հանելու դեպքում այն շրջանառության մեջ է դրվում հետևյալ կերպ. «կետից (մասից).....հոդվածից.....հանել «.....» (նախադասությունը «.....»)»:

Օրինակ՝

1. 10-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «նպաստ և այլ սոցիալական վճարները» բառերը:
2. 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից հանել «խնամակալության և հոգաբարձության մարմինները որդեգրման վայրում կամ ծնողների բնակության վայրում» նախադասությունը:

Առաջադրանք 3. Օրենքում փոփոխությունների կատարումը նոր խմբագրությամբ շարադրելու կամ առանձին բառեր կամ նախադասություններ փոխարինելու միջոցով:

Նոր խմբագրությամբ հոդվածի կամ դրա կառուցվածքային տարրի ընդունման ժամանակ այն շարադրվում է հետևյալ կերպ. «հոդվածը (մասը, կետը, հոդվածի ենթակետը) շարադրել հետևյալ խմբագրությամբ»:

Հոդվածում նախադասությունների կամ բառերի կամ դրա կառուցվածքային տարրերի փոփոխության դեպքում այն շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «կետում...հոդվածի..... բառերը (նախադասությունը) «.....» փոխարինել բառերով (նախադասությամբ) «.....»:

Օրինակ՝

1. 73-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գործադուլը մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ մի խումբ աշխատողների կողմից աշխատանքային վեճը լուծելու նպատակով աշխատանքի ամբողջական կամ ժամանակավոր մասնակի դադարեցումն է»:
2. 7-րդ հոդվածի 1-ին կետում «առողջապահության ոլորտում կառավարման մարմին» նախադասությունը փոխարինել «կրթության ոլորտում կառավարում իրականացնող մարմին» նախադասության հետ:

Առաջադրանք 4.

Օրենսդրական ակտի գլուխը, հոդվածը, մասը, կետը (ենթակետը) ուժը կորցրած ճանաչելու դեպքում այն շրջանառության մեջ է դրվում հետևյալ կերպ.

«գլուխը/հոդվածը ..... (ենթակետը....կետը.....մասը....հոդվածը....) ճանաչել ուժը կորցրած»:

Օրինակ՝

1. Օրենքի 7-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած:
2. 3-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:
3. 2-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Առաջադրանք 5.. Նորմատիվ իրավական ակտերի տեքստի կառուցվածքային կազմակերպման մոդելավորում

Ուսանողին տրամադրվում է դասախոսի կողմից ընտրված տեքստ, որն իրենից ներկայացնում է ամբողջական, կառուցվածքային առումով ոչ դիֆերենցված նյո նորմատիվ նյութ: Անհրաժեշտ է ներկայացված տեքստը ձևակերպել օրենսդրական գլխի տեսքով՝ այն բաժանելով նորմատիվ իրավական ակտի համապատասխան կառուցվածքային միավորների (հոդվածներ, մասեր, կետեր, հոդվածների ենթակետեր)՝ օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան:

Առաջադրանք 6. Օրինագծի իրավական փորձաքննությունն իրականացնելը:

Օրինագծի ընտրությունը ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքից՝ https://www.e-draft.am և տարբեր չափանիշներով իրավական փորձաքննության իրականացումը համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

Օրինակ՝

Օրինագծի ՀՀ Սահմանադրությանը և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող օրենսդրությանը համապատասխանության վերլուծությունը: Օրինագծում իրավական բացերի (կարգավորված են արդյո՞ք իրավահարաբերությունների բոլոր ոլորտները,

ապահովված է արդյո՞ք իրավական կարգավորման ամբողջականությունը) առկայության ստուգում:

Օրինակ՝

Օրինագծի օրենսդրական տեխնիկայի կանոնների համապատասխանության ստուգում: Օրինագծում գործող այլ իրավական ակտերում պարունակվող իրավական նորմերի անհարկի կրկնության ստուգում: Օրինագծի եզրափակիչ և անցումային դրույթներում իրավական կարգավորման հաջորդականության պահպանման ստուգումը: Արդյո՞ք նախագծում (կից փաստաթղթերում և տեղեկանքներում) ուշադրություն է դարձվել փոփոխությունների և լրացումների կատարման անհրաժեշտությանը:

11.6 Ընթացիկ ստուգումների գրավոր առաջադրանքների նմուշներ

Տարբերակ 1.

1. Օրենսդրական տեխնիկայի գրաֆիկական պահանջները (նորմաստեղծ գրաֆիկա) (30 բալ)
2. Իրավական փորձաքննություն. հասկացությունը, սկզբունքները, տեսակները (50 բալ)
3. Թեստային առաջադրանք (20 բալ)

Տարբերակ 2.

1. Օրենսդրական տեխնիկայի լեզվաոճական պահանջները (30 բալ)
2. Նորմատիվ իրավական ակտերում հղումների կիրառման կանոնները (50 բալ)
3. Թեստային առաջադրանք (20 բալ)

Տարբերակ 3.

Հարց 1. Բացահայտե՛ք նորմատիվ իրավական ակտերի վավերապայմանների տեսակները և ձևակերպման կանոնները (40 բալ):

Հարց 2. Ներկայացված տեքստը ձևակերպե՛ք օրենսդրական հոդվածի տեսքով՝ այն բաժանելով կառուցվածքային միավորների (հոդվածի մասեր, կետեր, ենթակետեր)՝ օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան: Մշակե՛ք (հորինե՛ք) տվյալ հոդվածի անվանումը (60 բալ):

Թափոններ են համարվում սննդամթերքի, փաթեթավորման մնացորդները, ինչպես նաև կենցաղային և այլ առարկաները, որոնք կորցրել են իրենց օգտակար հատկությունները: Թափոնները տարանջատվում են ըստ ուտիլիզացման (ոչնչացման/օգտահանման) եղանակի: Թափոնների հիմնական տեսակներին են դասվում սննդային թափոնները և վերամշակվող թափոնները: Վերամշակվող թափոնների թվին են պատկանում պլաստիկը, թուղթը և ապակյա տարաները: Կենցաղային այն առարկաները, որոնք կորցրել են իրենց օգտակար հատկությունները, սպառողների

կողմից ենթակա են պարտադիր առանձին տեսակավորման՝ նախքան դրանք աղբամաններում (կոնտեյներներում) տեղադրելը:

11.7 Ստուգարքի գրավոր առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ

Տարբերակ 1. Օրենսդրական կամ այլ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակում: Փոփոխությունները (լրացումները, բացառումները փոխարինումները) կատարվում են գլխում, հոդվածում, մասում, կետում, ենթակետում, կամ իրականացվում են օրենսդրական ակտի տարբեր կառուցվածքային միավորները նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով: Նախագիծը պետք է կազմված լինի օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխան, պարունակի բոլոր անհրաժեշտ պաշտոնական վավերապայմանները (հերթական համարը, ամսաթիվը, պաշտոնատար անձի անվանատառերը կարող են լինել պայմանական):

Տարբերակ 2. Ձևակերպե՛ք տվյալ հոդվածի թվային նշումները՝ օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան[1] 1: Անհրաժեշտ է վերհիշել նորմատիվ իրավական ակտերի տեքստերում ժամկետներ, դրամական գումարներ և կոտորակային թվերի, ամսաթվերի բառաթվային ձևակերպման օրենսդրական կանոնները (ըստ Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի):

Հոդված 1. Խորհուրդը պետք է որոշում ընդունի 6 աշխատանքային օրվա ընթացքում՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի 2/3-ով: Մեծածավալ հարցերի քննարկման դեպքում որոշման ընդունումը կարող է հետաձգվել, բայց ոչ ավելի, քան 12 օրով: Նշված ժամկետի լրանալուց հետո հանձնաժողովի անդամներից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր բաց թողնված օրվա համար 500 դրամի չափով:

Տարբերակ 3. Կետադրական ո՞ր նշանը պետք է բաժանի նորմատիվ իրավական ակտի տվյալ հոդվածի 1-ին մասում ամրագրված այս երկու պայմանները: Հիմնավորե՛ք ձեր ընտրությունը՝ վկայակոչելով և մանրամասնելով օրենսդրական տեխնիկայի այն կանոնը («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում), համաձայն որի՝ պայմանների թվարկման ժամանակ կետադրական նշանի ընտրությունը կախված է այդ պայմանների որոշակի չափանիշներից:

1. Ընդունելության քննություններին մասնակցելու համար անձը ընդունող հանձնաժողով է ներկայացնում՝

[1] Առաջադրանքներում հոդվածների բովանդակությունը և անվանումները պայմանական են:

1) քննությունների համար սահմանված վճարի մուծումը հավաստող անդորրագիր

2) լիազոր մարմնի տեղեկանք՝ անձին քննության վճարից ազատելու մասին

Տարբերակ 4. Դասախոսի հայեցողությամբ ընտրված նորմատիվ իրավական ակտի նախագծի փորձաքննության անցկացում: Իրավական փորձաքննությունը պետք է անցկացվի մի քանի չափանիշներով՝ օրենսդրական տեխնիկայի հիմնական պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար: Ուսանողի կողմից իր հայեցողությամբ պետք է ընտրվի օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխանության ստուգման առնվազն երեք չափանիշ:

12. Առարկայի ուսումնամեթոդական նյութեր

ա) Բազային գրականություն

1. Законодательная техника. Учебно-методическое пособие./ Даллакян Л.Г. Ереван: Изд-во РАУ, 2018

2. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ձեռնարկ/Տ. Դաղունց և ուրիշ.- Եր.:ԱՀԱ Պոլիգրաֆ, 2025

բ) Հիմնական գրականություն

1. Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա. Ուսումնական ձեռնարկ / Գևորգ Դանիելյան, Եր. «Տիգրան Մեծ» հրատ. 2021 թ.
2. Калина, В. Ф. Юридическая техника : учебник для вузов / В. Ф. Калина. Изд. 2-е переработаннов и дополненое— Москва : Издательство Юрайт, 2024
3. Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույց. Եր. «Տիգրան Մեծ», 2014
4. Законодательная техника: учеб. пособие / Н. Т. Леоненко. Новосибирск: Изд-во СибАГС, 2015
5. Кашанина, Т. В. Юридическая техника: учебник / Т.В. Кашанина. – 2-е изд., пересмотр. – Москва: Норма: ИНФРА-М, 2015
6. Горохова, С. С. Юридическая техника: учебник для академического бакалавриата /С.С. Горохова. М.: Издательство Юрайт, 2017
7. Законодательная техника: учеб. пособие/ Чухвичев Д.В.; Центр ОБСЕ в Ашхабаде, 2011
8. Книпер Р., Назарян В. Очерки к проблеме законодательной техники. По поручению Германского Общества по техническому сотрудничеству (GTZ). Эшборн, 1999 [Электронный ресурс] http://www.pravo.vuzlib.su/book_z1273.html

9. Законодательная техника: Науч.-практ. пособие / Под ред. Ю.А. Тихомирова; Ин-т законодательства и сравнит. правоведения при Правительстве РФ. – М.: Городец, 2000
10. Хабибулина Н.И. Юридическая техника и язык закона: Монография. – СПб.: С.-Петерб. ун-т МВД России, 2000.
11. Язык закона /Под. ред. А.С. Пиголкина. – М., 1990.

գ) Լրացուցիչ գրականություն

1. Гамбарян А. С., Даллакян Л. Г. Трансгрессия законодательных терминов и дефиниций в контексте отраслевой автономии // Государство и право. 2018. Номер 12 С. 93-103 [Электронный ресурс]. Доступ для зарегистрированных пользователей. URL: http://gospravo-journal.ru/s013207690002203-5-1/ (дата обращения: 19.08.2020).
2. Власенко Н. А. Основы законодательной техники: Практическое руководство. — Иркутск: Восточно-Сибирское книжное издательство, АО «Норма плюс», 2015
3. Болдырев С.Н. Юридическая техника и законодательная техника: проблема соотношения, Философия права. 2015. № 1 (68), с. 51-53
4. Чуева А.В. Понятие законодательной техники и круг компонентов законодательной техники. Современное общество и право. 2014. № 1 (14), с. 109-112
5. Ведомственное нормотворчество: теория и практика применения: монография / В. А. Баранов, В. В. Гущин, И. С. Долгих и др.; отв. ред. М. А. Лапина, В. А. Баранов. - Москва: Проспект, 2014
6. Кибак И.А.Законодательная техника в законотворческой деятельности. Вестник Московского университета МВД России. 2013. № 1, с. 214-222
7. Ивакина Н.Н. Юристу о нормах правописания. Практ. пособие. – М., Норма: ИНФРА-М, 2013
8. Парамонов А.Р. Законодательная техника: Учеб. пособие. Под ред. Ф.Л.Шарова.- М.: МИЭП, 2005
9. Костенко М. А. Логико-лингвистический анализ корректности текстов нормативно-правовых актов./ Таганрог: Изд-во ТРТУ. 2003, № 5 (34), с. 263-268
10. Справочник по нормотворческой технике / Пер. с нем. – 2-е изд., перераб. – М.: БЕК, 2002.
11. Шугрина Е. А. Техника юридического письма: Учебно-практическое пособие. - М., 2000.
12. Проблемы юридической техники: Сб. ст. / Под ред. В.М. Баранова. –Н.Новгород, 2000.
13. Муромцев Г.И. Юридическая техника (некоторые теоретические вопросы) // Известия высших учебных заведений. Правоведение, 2000.
14. Тарасов Н.Н. Юридические конструкции в праве и научном исследовании (методологические проблемы) \\ Российский юридический журнал, 2000, № 3, с. 25-36.
15. Керимов Д.А. Законодательная техника: Науч.-метод. и учеб. пособие. – М.,

դ) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով https://moodle.rau.am

ե) Առարկայի նորմատիվ հիմքը

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով)
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» (ընդունված 16.12.2016)
3. Հայաստանի Հանրապետության օրենք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունված 21.03.2018)
4. ՀՀ Կառավարության №13 արձանագրային որոշումը (ընդունված 20.05.2012թ.), Հավելված «Իրավական ակտերի մշակման ուղեցույց»
5. ՀՀ Կառավարության որոշում «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման կարգը» (ընդունված 22.11.2009թ.)

զ) Ինտերնետային ռեսուրսներ

1. ՀՀ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://arlis.am
2. ՀՀ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք https://e-draft.am
3. ՌԴ օրենսդրության տեղեկատվական որոնողական համակարգ https://garant.ru
4. Տեղեկատվական իրավաբանական համակարգ https:// www.consultant.ru

13. Գնահատման մեթոդաբանություն

13.1 Բալերի բաշխումն ըստ ուսումնական գործունեության տեսակների և վերահսկողական միջոցառումների

Ուսումնական գործունեության տեսակների և վերահսկողական միջոցառումների միջև բալերի բաշխումն իրականացվում է բալային-վարկանիշային (ռեյտինգային) համակարգին համապատասխան: Ուսումնական գործունեության բոլոր տեսակների և վերահսկողական միջոցառումների գնահատականների ընդհանուր առավելագույն գումարը կազմում է 100 բալ:

13.1.1 Ուսումնական գործունեության տեսակների և վերահսկողական միջոցառումների միջև բալերի բաշխումն իրականացվում է հետևյալ տոկոսային հարաբերակցությամբ.

1. **Ուսումնական գործունեության տեսակներ. ընթացիկ աշխատանք** սեմինարական պարապունքների ընթացքում՝ համաձայն սեմինար պարապմունքների պլանների: Ներառում է սեմինարների ժամանակ ուսանողների բանավոր և գրավոր պատասխանները, մասնակցությունը քննարկումներին, գործնական խնդիրների լուծումը և առանձին դեպքերում՝ կատարված ինքնուրույն աշխատանքի

ներկայացումը: Սեմինարների գնահատականների տեսակարար կշիռը միջանկյալ ստուգումների վերջնական բալային գնահատականում կազմում **է 40%»**

2. Վերահսկողական միջոցառումներ՝ ստուգարք: Ամփոփիչ գրավոր աշխատանքի անցկացում ողջ կիսամյակի ընթացքում ուսումնասիրված թեմաների շրջանակներում: Իրականացվում է ստուգարքի հարցաթերթիկներում ներառված տեսական կամ վերլուծական առաջադրանքների, կամ իրավիճակային խնդիրների գնահատման միջոցով: Ստուգարքի գնահատականի կշիռը վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում կազմում է **60%-ը**:

13.1.2 Բալերի բաշխումն ըստ գնահատման միջոցների տեսակների

Գնահատման միջոցների տեսակների շրջանակներում բալերի բաշխումը կախված է սեմինարական աշխատանքների, ստուգարքի հարցաթերթիկներում ներառված հարցերի և առաջադրանքների բարդությունից ու աշխատատարությունից:

Մեկ ստուգողական թերթիկում տեսական հարցի և վերլուծական առաջադրանքի համակցման դեպքում դրանց «արժեքը» կարող է հարաբերակցվել համապատասխանաբար աշխատանքի առավելագույն բալի **40%-ի** և **60%-ի** համամասնությամբ (ելնելով բարդության մակարդակից):

Օրինակ՝ տեսական հարց և գործնական առաջադրանք.

Հարց 1. Բացահայտե՛ք նորմատիվ իրավական ակտերում կիրառվող իրավաբանական սահմանումների (դեֆինիցիաների) տեսակները **(40 բալ):**

Հարց 2. Ներկայացված տեքստը ձևակերպե՛ք օրենսդրական հոդվածի տեսքով՝ այն բաժանելով կառուցվածքային միավորների (հոդվածի մասեր, կետեր, ենթակետեր)՝ օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան: Մշակե՛ք տվյալ հոդվածի անվանումը **(60 բալ):**

Թափոններ են համարվում սննդամթերքի, փաթեթավորման մնացորդները, ինչպես նաև կենցաղային և այլ առարկաները, որոնք կորցրել են իրենց օգտակար հատկությունները: Թափոնները տարանջատվում են ըստ ուտիլիզացման (օգտահանման) եղանակի: Թափոնների հիմնական տեսակներին են դասվում սննդային թափոնները և վերամշակվող թափոնները: Վերամշակվող թափոնների թվին են պատկանում պլաստիկը, թուղթը և ապակյա տարաները: Կենցաղային այն առարկաները, որոնք կորցրել են իրենց օգտակար հատկությունները, սպառողների կողմից ենթակա են պարտադիր առանձին տեսակավորման՝ նախքան դրանք աղբամաններում (կոնտեյներներում) տեղադրելը:

Եթե հարցաթերթիկում ներառված երկու հարցերն էլ պատկանում են միևնույն կատեգորիային, ապա դրանց միջև ընդհանուր բալերը կարող են բաշխվել ինչպես հավասար, այնպես էլ տարբեր տոկոսային հարաբերակցությամբ՝ կախված յուրաքանչյուր հարցի աշխատատարությունից և բարդությունից:

Օրինակ՝ երկու տեսական հարց.

Հարց 1. Բացահայտե՛ք նորմատիվ իրավական ակտերում հղումների տեսակները և կիրառման կանոնները **(55 բալ):**

Հարց 2. Օրինակներով շարադրե՛ք օրենսդրական ակտերի տիտղոսային վավերապայմանները **(45 բալ):**

13.2 Գնահատման չափանիշներն ըստ յուրաքանչյուր գնահատման միջոցի

Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է տարբերակված ձևով՝ ըստ ուսումնական գործունեության յուրաքանչյուր տեսակի և կիրառվող գնահատման միջոցների:

1. Գնահատումը սեմինարական պարապմունքների ժամանակ. բանավոր հարցում և գործնական առաջադրանքների կատարում

Բարձր բալեր նշանակվում են, եթե ուսանողը բանավոր հարցման ժամանակ ցուցաբերում է գրագետ խոսք և ընթացիկ սեմինարի նյութի ազատ տիրապետում, առնվազն կողմնորոշվում է նախորդ սեմինարների թեմատիկայում, ինչպես նաև ընդհանուր առմամբ ազատ կողմնորոշվում է օրենսդրական տեխնիկայի առանցքային կանոններում (նորմատիվ իրավական ակտերի վավերապայմանների և ներքին կառուցվածքի ձևակերպում, նորմատիվ տեքստի ձևակերպման լեզվական կանոններ, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոններ ու տեխնիկա, հղումների տեխնիկա, իրավական փորձաքննության չափանիշներ և այլն): Պատրաստակամորեն պատասխանում է լրացուցիչ հարցերին, տիրապետում է անհրաժեշտ տերմինաբանական ապարատին: Ինքնուրույն և արդյունավետ կերպով լուծում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, իրավական փորձաքննությանը և կառուցվածքի մոդելավորմանը վերաբերող առաջադրանքները՝ ապահովելով նորմատիվ նյութի համապատասխանությունը ուղղագրական, շարահյուսական և օրենսդրական տեխնիկայի այլ կանոններին

Բալերի նվազեցում տեղի է ունենում դասընթացի տերմինաբանական ապարատին և իրավական կատեգորիաներին վերաբերող ձևակերպումներում անճշտությունների առկայության, օրենսդրական տեխնիկայի հիմնական կանոնների մակերեսային գիտելիքների դեպքում, նյութի անհետևողական շարադրման, ինչպես նաև դասախոսի ստուգողական և լրացուցիչ հարցերին պատասխանելիս դժվարությունների հանդիպելու դեպքում: Ցուցաբերում է պասիվ մասնակցություն նախագծերի մշակմանը, իրավական փորձաքննությանը և նորմատիվ ակտերի կառուցվածքի մոդելավորման վերաբերող առաջադրանքների լուծմանը և քննարկմանը: Դժվարանում է ապահովել նորմատիվ նյութի

համապատասխանությունը ուղղագրական, շարահյուսական և օրենսդրական տեխնիկայի այլ կանոններին

Անբավարար բալեր նշանակվում են դասընթացի հիմնական կատեգորիաների սահմանման մեջ կոպտագույն սխալների, նորմատիվ իրավական ակտերի կառուցվածքին, պաշտոնական վավերապայմաններին ու լեզվին ներկայացվող առանցքային պահանջների չիմացության, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոնների, հղումների ձևակերպման կանոնների, իրավաբանական տերմինների սահմանումների (դեֆինիցիաների) ձևակերպման վերաբերյալ գիտելիքների բացակայության դեպքում: Սեմինարական պարապմունքի հանձնարարված նյութին ակնհայտորեն չտիրապետելու, դասախոսի կողմից տրված ստուգողական հարցերին պատասխանելու ցանկության կամ կարողության բացակայության դեպքում: Ինչպես նաև այն դեպքում, երբ ուսանողը չի մասնակցում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման գործնական առաջադրանքների լուծմանը և քննարկմանը:

Կանոնակարգային խախտումներ՝ երբ ուսանողն ի վիճակի չէ բանավոր խոսքի միջոցով հստակ շարադրել պատասխանը սահմանված կանոնակարգային ժամանակահատվածում (դադարների երկարաձգում, շարադրման չափազանց դանդաղ տեմպ կամ միտքը ձևակերպելու անկարողություն, ինչը հանգեցնում է պարապմունքի ժամանակացույցի զգալի խախտման):

2. Գրավոր ստուգարք (ըստ ստուգողական հարցաթերթիկների)

Ստուգողական հարցաթերթիկի յուրաքանչյուր առաջադրանք ունի բալերով արտահայտված ֆիքսված «արժեք», որը նշված է հարցի վերջում՝ փակագծերում, որոնց համաձայն էլ իրականացվում է ուսանողի աշխատանքի գնահատումը: Ամփոփիչ ատեստավորման գնահատման ժամանակ բալերի բաշխումը կախված է հարցաթերթիկներում ներառված հարցերի և առաջադրանքների բարդությունից ու աշխատատարությունից [2]. Հավաքած բալերի վերջնական արդյունքը ձևավորվում է ուսանողների գիտելիքների որակի գնահատման 0-ից 100 բալանոց սանդղակին համապատասխան, որը սահմանված է «ՀԱՀ-ի կրեդիտա-ռեյտինգային համակարգի և ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգով»:

Բարձր բալեր նշանակվում են, եթե ուսանողն ազատ կողմնորոշվում է օրենսդրական տեխնիկայի առանցքային կանոններում (նորմատիվ իրավական

[2] Պարզ տեսական հարցերը, վերլուծական առաջադրանքները և իրավիճակային խնդիրները գնահատվում են տարբերակված ձևով: Օրինակ՝ մեկ ստուգարքային կամ քննական թերթիկում տեսական հարցի և վերլուծական առաջադրանքի համակցման դեպքում դրանց «արժեքը» կարող է հարաբերակցվել համապատասխանաբար աշխատանքի առավելագույն բալի **40%-ի** և **60%-ի** համամասնությամբ (ելնելով բարդության մակարդակից): Եթե երկու հարցերն էլ պատկանում են նույն կատեգորիային (երկուսն էլ տեսական են կամ երկուսն էլ՝ վերլուծական), ապա դրանց միջև ընդհանուր բալերը նույնպես կարող են բաշխվել տարբեր տոկոսային հարաբերակցությամբ՝ կախված յուրաքանչյուր հարցի աշխատատարությունից:

ակտերի վավերապայմանների և ներքին կառուցվածքի ձևակերպում, նորմատիվ տեքստի ձևակերպման լեզվական կանոններ, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոններ ու տեխնիկա, հղումների տեխնիկա, իրավական փորձաքննության չափանիշներ և այլն): Առաջարկել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, իրավական փորձաքննությանը և կառուցվածքի մոդելավորմանը վերաբերող գործնական առաջադրանքների ճիշտ, տրամաբանված և փաստարկված լուծումներ՝ ապահովելով նորմատիվ նյութի ձևակերպումը ուղղագրական, շարահյուսական և օրենսդրական տեխնիկայի այլ կանոններին համապատասխան:

Բալերի նվազեցում տեղի է ունենում, եթե հարցերին պատասխանելիս, ինչպես նաև վերլուծության ընթացքում թույլ են տրվել էական սխալներ; ուսանողի հետևությունները մակերեսային են՝ առանց օրենսդրական տեխնիկայի տեսական հիմքերի անհրաժեշտ հիմնավորման: Տեսական հարցերի պատասխաններում գրավոր նյութը շարադրված է ոչ համակարգված, առկա են շեղումներ առաջադրված հարցերից; կամ դասախոսի առաջադրած տեսական հարցերի վերլուծության և հստակ պատասխանի փոխարեն տեղի է ունենում օժանդակող նյութերից տեքստի պարզ մեխանիկական շարադրում: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, կառուցվածքի մոդելավորմանը և նորմատիվ նյութի ձևակերպմանը վերաբերող գործնական առաջադրանքների լուծման ընթացքում նկատվում են էական սխալներ, ինչը վկայում է նորմատիվ նյութի ձևավորման գործնական հնարքներին ու տեխնիկային ոչ լիարժեք տիրապետելու մասին:

Անբավարար բալեր նշանակվում են, եթե ուսանողն ի վիճակի չէ գրավոր ձևով հստակ շարադրել տեսական հարցերի և առաջադրանքների պատասխանները. նկատվում է նյութի խառնաշփոթ շարադրանք, ինչպես նաև որևէ տրամաբանության և հետևությունների բացակայություն: Ուսանողը թույլ է տալիս կոպտագույն սխալներ և ցուցաբերում է օրենսդրական տեխնիկայի հիմունքների, նորմատիվ իրավական ակտերի կառուցվածքին, պաշտոնական վավերապայմաններին ու լեզվին ներկայացվող առանցքային պահանջների չիմացություն. բացակայում են պատկերացումները նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, հղումների ձևակերպման, ինչպես նաև իրավաբանական տերմինների սահմանումների (դեֆինիցիաների) մշակման կանոնների վերաբերյալ: Նկատվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման կատարյալ անկարողություն: Անբավարար բալեր նշանակվում են նաև այն դեպքերում, երբ ըստ էության բացակայում են ստուգողական հարցաթերթիկներում ներառված հարցերի ուղղակի պատասխանները. ուսանողն ինքնակամ շեղվում է առաջադրանքների թեմատիկայից, փորձ է անում նենգափոխել հարցերը և նկարագրել այլ թեմաներ, որոնք չեն առնչվում հարցաթերթիկի առաջադրանքին:

13.3 Բալերը վերջնական գնահատականի փոխարկելու սանդղակ

Կիսամյակի ընթացքում հավաքած բալերի գումարի փոխարկումը ակադեմիական վերջնական գնահատականի իրականացվում է ուսանողների գիտելիքների որակի գնահատման՝ 0-ից մինչև 100 բալանոց միասնական սանդղակի համաձայն, որը սահմանված է 2005թ. հուլիսի 6-ի «ՌՀՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտա-ռեյտինգային համակարգի մասին կանոնակարգով» N 228-ով (2007թ. նոր խմբագրությամբ):

13.4 Առարկայի վերջնական գնահատականի ձևավորման կարգը

«Օրենսդրական տեխնիկա» առարկայի վերջնական գնահատականը հաշվարկվում է կումուլյատիվ (կուտակային) մեթոդով և բաղկացած է մի քանի հիմնական բաղադրիչներից.

- **Ընթացիկ գնահատականը** ձևավորվում է սեմինարների ժամանակ և հաշվարկվում է որպես հարցումների ընթացքում ուսանողի ստացած բոլոր գնահատականների միջին թվաբանական, որը ներառում է նաև սեմինարական պարապմունքներին ուսանողի ակտիվության բոլոր տեսակները:
- **Վերջնական ստուգման (ստուգարքի) գնահատականը** ձևավորվում է ստուգարքային հարցաթերթիկներում ներառված առաջադրանքների կատարման արդյունքների հիման վրա: Հարցաթերթիկները ընդգրկում է ամբողջ մոդուլի թեմաներից ընտրված առաջադրանքներ՝ այդպիսով ամփոփելով դասընթացի շրջանակներում ուսումնասիրված նյութը:
- **Վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականը** իրենից ներկայացնում է հանրագումարային բալ, որը ձևավորվում է ուսանողի կողմից ընթացիկ, ամփոփիչ ստուգման (ստուգարքի) արդյունքների հիման վրա, որտեղ ստուգարքի կշիռը կազմում է վերջնական գնահատականի **60%-ը:**

13.5 Դրական գնահատական ստանալու նվազագույն պահանջները

Դրական գնահատական, այդ թվում՝ «Ստուգված» ամփոփիչ գնահատական ստանալու համար ուսանողը պարտավոր է կատարել հետևյալ նվազագույն պահանջները[3].

- **Սեմինարական և դասախոսական պարապմունքների ընթացքում** ուսանողը պետք է ապահովի բնականոն հաճախելիություն, որը թույլ կտա նրան յուրացնել առարկայի առանցքային թեմաները: Սեմինարի ժամանակ բանավոր պատասխանի դեպքում նվազագույն դրական գնահատական ստանալու համար ուսանողին բավական է թեման իմանալ դասախոսի կողմից կազմված դասախոսությունների համառոտ կոնսպեկտի շրջանակներում: Նշված կոնսպեկտը՝ յուրաքանչյուր թեմայի սեմինարի պատասխանի պլանի հետ միասին, դասախոսի կողմից նախապես բաժանվում է ուսանողներին, ինչը հեշտացնում է սեմինարին պատրաստվելը:
- **Ամփոփիչ ստուգում՝ ստուգարք.** անհրաժեշտ է կատարել գրավոր առաջադրանքները ստուգողական հարցաթերթիկից: Ամփոփիչ ստուգման ժամանակ 40 բալ ստանալու համար ուսանողին անհրաժեշտ է տիրապետել

[3] Պատասխաններին ներկայացվող բովանդակային պահանջները տե՛ս 13.2 կետում՝ ըստ յուրաքանչյուր գնահատման միջոցի

ստուգարքի հարցաշարում ներառված տեսական հարցերին: *Նվազագույն անցողիկ բալ ստանալու համար թույլատրվում է պատրաստվել դասախոսի կողմից կազմված դասախոսությունների համառոտ կոնսպեկտով:*

- **Ընդհանուր արդյունք.** ընթացիկ և ամփոփիչ ստուգման (ստուգարքի) արդյունքներով ուսանողի հավաքած հանրագումարային բալը պետք է կազմի առնվազն 40 բալ՝ վերը սահմանված տոկոսային հարաբերակցությանը համապատասխան:

13. 6 Գնահատման միջոցների համապատասխանությունը դասընթացի ուսումնառության արդյունքներին

Որակավորման ընդհանուր նկարագիրը (բնորոշումը)	Դասընթացի ուսումնառության արդյունք	Գնահատման միջոցի տեսակը և անվանումը
Գիտելիքները՝ Գիտելիք և իմացություն .	1. Իրավաբանական/օրենսդրական տեխնիկայի հիմնական կանոնների և պահանջների, նորմատիվ նյութի ձևավորման մեթոդների, միջոցների և հնարքների վերաբերյալ հիմնարար գիտելիք. 2. Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի պաշտոնական իրավական փորձաքննության կանոնների և ընթացակարգերի, իմչպես նաև փորձաքննության ընթացքում կիրառվող համապատասխան ստուգաթերթերի իմացություն.	***1.Բանավոր կամ գրավոր հարցում՝*** ստուգարքի հարցաշարից, հարցեր № 1-22 ***2. Ընթացիկ ստուգումների գրավոր առաջադրանքների նմուշներ.*** տարբերակ 1, տարբերակ 2, տարբերակ 3՝ հարց № 1 ***3. Առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար.*** հարցեր № 1, № 2, № 3 ***4. Ստուգարքի առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ.*** տարբերակ 2. տարբերակ 3

Հմտությունները՝ Գիտելիքի և իմացության կիրառում.	1. Կարող է ինքնուրույն մշակել և կազմել նորմատիվ իրավական և ներքին (լոկալ) իրավական ակտեր, իրականացնել նշված իրավական ակտերի և նախագծերի իրավական փորձաքննություն և ներկայացնել համախատասխան իրավաբանական եզրակացություններ.	1. Գործնական բլոկ *ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու օրինագծի մշակում.* Առաջադրանքներ № 1, 2, 3, 4, 6, *2. Ընթացիկ ստուգումների գրավոր առաջադրանքների նմուշներ.* տարբերակ 3՝ հարց № 2 *3. Ստուգարքի առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ.* տարբերակ 1.
	2. Կարող է օրինական մեթոդներով՝ օգտվելով ՀՀ մասնագիտացված որոնողատեղեկատվական իրավական համակարգերի և էլեկտրոնային հարթակների ընձեռած հնարավորություններից որոնել և գտնել վերաբերելի նորմատիվ իրավական և լոկալ ակտեր, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև «ARLIS» և «IRTEC» և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ https://e-draft.am իրավական հարթակների	2. *Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար.* հարց № 4 հարց № 5

	միջոցով հետևել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընթացիք փոփոխություններին:	
Կարողունակությունը (կոմպետենցիան)՝ 1.Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ	1.Տիրապետելով տարբեր էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում անհրաժեշտ իրավական փաստաթղթեր և տեղեկատվություն որոնելու հմտություններով՝ կարող է հավաքել, մշակել, մեկնաբանել և վերլուծել որոշակի քանակական և որակական տվյալներ, որոնք անհրաժեշտ են իրավաստեղծ գործնթացի նախորդող և սկզբնական փուլերի աշխատանքները պատշաճ կատարելու համար	***<u>1. Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար.</u>*** հարց № 4 հարց № 5
2.Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը).	2.Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս՝ մասնավորապես իրավաստեղծ ոլորտում գործունեություն ծավալելիս և նորմատիվ ակտեր մշակելիս, ցուցաբերել վերլուծական դատողություններ անելու ունակություն, ստեղծագործական մոտեցում և նախաձեռնողականություն:	***<u>2.Ընթացիկ ստուգումների գրավոր առաջադրանքների նմուշներ.</u>*** տարբերակ 3՝ հարց № 2 ***<u>3. Ստուգարքի գրավոր առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ.</u>*** Տարբերակ 1.
3.Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ներառյալ սովերելու կարողությունները).	3.Ունակ է ինքնուրույն (կամ համապատասխան ղեկավարման ներքո) պատասխանատու կերպով աշխատելու տարբեր մասնագիտական թիմերում/խմբերում, որոնք մշակում և ներկայացնում են	<u>1.Գործնական բլոկ ՀՀ</u> ***օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու օրինագծի մշակում.*** առաջադրանքներ №1,

	նորմատիվ իրավական և ներքին (լոկալ) իրավական ակտերի նախագծեր, կամ իրականացնում են նորմատիվ բնույթի ակտերի իրավական փորձաքննություն. Տիրապետում է տվյալ ոլորտում ինքնուրույն ուսումնառությունը շարունակելու բավարար կարողություններին և սովորելու հմտություններին	2, 3, 4, 5, 6, ***2. Առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար.*** հարցեր № 1, 2, 3

14. Մեթոդական բլոկ

14.1.1. Մեթոդական ուղեցույց ուսանողների համար՝ սեմինարական, գործնական պարապմունքներին պատրաստվելու և ինքնուրույն աշխատանքի կազմակերպման վերաբերյալ

Առարկայի ուսումնական ծրագիրը ներառում է դասախոսական պարապմունքներ, սեմինարական պարապմունքներ, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն աշխատանք: Դասընթացի շրջանակներում կիրառվում են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաների տարրեր (բանավեճեր, քննարկումներ, դատախաղեր և այլն):

Դասախոսական պարապմունքներ. Դասընթացի հիմնական տեսական նյութը շարադրվում է դասախոսությունների ժամանակ: Դասախոսական պարապմունքների ընթացքում ուսանողներին տրամադրվում է ուսուցողական օժանդակող նյութեր, որտեղ համառոտ ձևով շարադրված են տվյալ դասախոսության ժամանակ ուսումնասիրվող թեմայի հիմնական թեզերը և առանցքային դրույթները: Դասախոսական պարապմունքը կարող է ուղեկցվել դասընթացի հիմնական թեմաներով պատրաստված (հեղինակային) PPT պրեզենտացիաներով:

Դասախոսությունների ընթացքում ուսանողներին անհրաժեշտ է կոնսպեկտավորել և նշումներ կատարել՝ դասախոսի կողմից ներկայացվող ձևակերպումների ու կատեգորիաների էությունը բաց չթողնելու, ինչպես նաև դասախոսի եզրահանգումներն ու գործնական հանձնարարականները արձանագրելու համար: Դա անհրաժեշտ է նաև սեմինարական պարապմունքներին, միջանկյալ ստուգումներին և ամփոփիչ ատեստավորմանը որակյալ պատրաստվելու համար:

Սեմինարական պարապմունքներ. Սեմինարական պարապմունքների ժամանակ տեղի է ունենում դասախոսությունների ժամանակ ներկայացված նյութի մշակում, ավելի

խորը և մանրամասն ուսումնասիրություն: Մասնավորապես, եթե ուսանողները պատշաճ կերպով չեն յուրացրել դասախոսություններին շարադրված նյութը, դասախոսը լրացուցիչ պարզաբանում է դասախոսության ժամանակ անցած թեմաները:

Սեմինարական պարապմունքները կարող են անցկացվել գրավոր ձևով՝ թեմայի վերաբերյալ թեստեր լրացնելու կամ համապատասխան առաջադրանքներ կատարելու միջոցով: Սեմինարի պարապմունքների ընթացքում ուսանողներին կարող են տրվել նաև դասընթացի հիմնական թեմաների վերաբերող գործնական խնդիրներ, ինչից հետո տեղի է ունենում խնդիրների լուծման տարբերակների ընդհանուր քննարկումը և ուսանողի համապատասխան գնահատումը դասախոսի կողմից: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողներն անմիջականորեն զարգացնում են նորմատիվ իրավական նյութի ձևավորման հմտությունները՝ մշակելով տարբեր օրինագծեր, ինչպես նաև իրականացնելով նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն:

Սեմինարական պարապմունքի հարցերին որակյալ պատրաստվելու համար ուսանողը պետք է ուսումնասիրի դասախոսությունների նյութերը, հիմնական գրականությունը/բազային դասագրքերը, այնուհետև ծանոթանա լրացուցիչ գրականությանը, որից հետո խորհուրդ է տրվում նախապես կազմել սեփական պատասխանի նախագիծ-կոնսպեկտը: ՈՒսանողը նաև պետք է ուշադրություն դարձնի դասընթացի շրջանակներում անցած թեմաներով գործնական խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը:

Ինքնուրույն աշխատանք. Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողն իրականացնում է դասընթացի նյութերի լրացուցիչ ուսումնասիրություն՝ ուսումնական ծրագրին և առաջարկվող տարբեր աղբյուրներին (բազային, հիմնական և լրացուցիչ գրականությանը) համապատասխան: «Օրենսդրական տեխնիկա» դասընթացի ինքնուրույն աշխատանքի շրջանակներում ուսանողն առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնի դասախոսությունների ժամանակ ստացած գիտելիքների համակարգմանն ու ամրապնդմանը: Այնուհետև ուսանողին անհրաժեշտ է խորացնել և ընդլայնել իր տեսական գիտելիքները լրացուցիչ աղբյուրների, ուսումնական ու գիտական գրականության, ինչպես նաև նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով: Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի նաև ՀՀ և ՌԴ օրենսդրության տեղեկատվական-որոնողական համակարգերով աշխատելու կիրառական հմտությունների զարգացմանը: Ուսանողը պետք է ինքնուրույն վարժվի իրավական փաստաթղթերի որոնման, ընտրության և համակարգային վերլուծության մեջ՝ օգտագործելով «ARLIS» և «IRTEC» տեղեկատվական ռեսուրսները, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական https://www.e-draft.am հարթակին

14.1.2 Մեթոդական ուղեցույց ուսանողների համար՝ ամփոփիչ ատեստավորմանը պատրաստվելու համար

Ամփոփիչ ստուգումը ստուգարքի ձևով իրականացվում է մոդուլի ընթացքում ուսումնասիրված նյութերի ընդհանրացման միջոցով: Ատեստավորումը կարող է ներառել

տեսական կամ վերլուծական հարցեր, կամ գործնական խնդիրներ՝ կիսամյակի ընթացքում ուսումնասիրված թեմաների շրջանակներում: Ստուգողական աշխատանքը ընդհանուռ առմամբ ներառում է երկու կամ երեք հարց/առաջադրանք/խնդիր ստուգարքի հարցաշարում թվարկված թեմաների ցանկից: Ամփոփիչ ատեստավորմանը պատրաստվելիս ուսանողին անհրաժեշտ է կրկնել մոդուլի ընթացքում ուսումնասիրված բոլոր նյութերը, ինչպես նաև ստուգարքի հարցաշարում ներառված բոլոր հարցերը/թեմաները: